DREAM PROJECT
LLC
EST. 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 15, ԹԻՎ 17, ԹԻՎ 8, ~~ԹԻՎ 20~~, ԹԻՎ 12, ԹԻՎ 9 ՇԵՆՔԵՐ, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 32 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԹԻՎ 39 ՇԵՆՔ ՏԱՆՈՂ ՀԱՏՎԱԾ, ԹԻՎ 22 ՇԵՆՔԻՑ ԴԵՊԻ ԹԻՎ 21 ՇԵՆՔ ՏԱՆՈՂ ՀԱՏՎԱԾ, ԹԻՎ 27 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍ, ԹԻՎ 36 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍ, ԹԻՎ 28 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍ ԵՎ Հ.ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑԻ ՆՈՐՈԳՄԱՆ՝
ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆ 2026

DREAM PROJECT
LLC
EST. 2020

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

Մասիս քաղաքի 3-րդ թաղամաս թիվ 15, թիվ 17, թիվ 8, թիվ 20, թիվ 12, թիվ 9 շենքեր, Նոր թաղամաս թիվ 32 շենքի հետնամասից դեպի թիվ 39 շենք տանող հատված, թիվ 22 շենքից դեպի թիվ 21 շենք տանող հատված, թիվ 27 շենքի հետնամաս, թիվ 36 շենքի հետնամաս, թիվ 28 շենքի հետնամաս և Հ. Ճիրազի փողոցի նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Համաձայնեցված է՝

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ վարչական գործունեության և բողոքների քննության վարչության ՃԵԿՄՀ բաժնի պետ՝

_____ Կ.ԿՈՍՏԱՆՅԱՆ

«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԳՃ՝ Տ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2026

Բովանդակություն

- Առաջադրանք
- Լիցենզիաներ
- Ինժեներաերկրաբանական եզրակացություն
- Բացատրագիր
- Տեխնիկական

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

1. Ուղիղ և կոր տեղամասերի աղյուսակ
2. Հողային պաստառի վերականգնման ամփոփագիր
3. Երթևեկելի մասի նորոգման ամփոփագիր
4. Իջատեղերի նորոգման ամփոփագիր
5. Մայթերի նորոգման ամփոփագիր
6. Ճանապարհային նշանների ամփոփագիր
7. Երթևեկելի մասի գծանշման ամփոփագիր
8. Համահավաք ամփոփագիր
9. Իրադրության լուսանկարներ

ԳԾԱԳՐԵՐ

1.	Իրադրության հատակագիծ /քարտեզ, կադաստր /	1-4	
2.	Հատակագիծ/գեոդեզիական հանույթ/	2-8	ԿՄ 0+000 - ԿՄ 0+315
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+132
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+067
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+061
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+060
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+022
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+075
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+079
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+074
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+465
3.	Հատակագիծ	3-8	ԿՄ 0+000 - ԿՄ 0+315
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+132
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+067
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+061
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+060
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+022
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+075
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+079
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+074
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+465
4.	Երկայնական կտրվածք	4-7	ԿՄ 0+000 - ԿՄ 0+315
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+132
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+067
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+061

			ԿՄ 0+000 - ԿՄ 0+060
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+022
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+075
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+079
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+074
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+465
5.	Լայնական կտրվածքներ	5-14	ԿՄ 0+000 - ԿՄ 0+315
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+132
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+067
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+061
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+060
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+022
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+075
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+079
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+074
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+465
6.	Ճանապարհային հագուստի կոնստրուկցիա		
7.	Ճանապարհային կահավորման հատակագիծ	6-7	ԿՄ 0+000 - ԿՄ 0+315
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+132
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+067
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+061
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+060
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+022
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+075
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+079
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+074
			ԿՄ 0+000 - ԿՄ 0+465

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Տիպային գծագրեր 7-1 – 7-7
2. Օբյեկտի սկզբում և վերջում տեղադրվող տիպային նշան 7-8

Հավելված N 1
« 18 » փետրվարի 2026 թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀՇՁԲ-26/35 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71241200	Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ Բնութագիրը՝ ստորև	դրամ	1 800 000	1	Մասիս համայնք, ք. Մասիս	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում

*ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների

Ծրագրի անվանումը	Ճանապարհահատվածի հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	Համայնքային բյուջե
Պատվիրատու	Մասիսի համայնքապետարան
Ծառայության անվանումը	Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ

Օբյեկտի համառոտ նկարագիրը	**Մասիս քաղաքի փողոցներ** Ճանապարհի կարգը - III, Ճանապարհը բնութագրող նկարագիրը (գլխավոր, երկրորդային, նպատակային կիրառությունը) – երկրորդային, Երթևեկելի մասի լայնությունը – 5-7 մ, Շարժման գոտիների քանակը - երկու, Մայթերի առկայությունը և լայնությունը – առկա է Օբյեկտի ռիսկայնության աստիճանը - III, Կառուցման/վերանորգման ենթակա հատվածի ընդհանուր մակերեսը – 5985 քմ /3-րդ թաղամաս թիվ 15 /350քմ/, թիվ 17 /350քմ/, թիվ 8 /350քմ/, թիվ 20 /300քմ/, թիվ 12 /550քմ/, թիվ 9 /200քմ/ շենքեր, Նոր թաղամաս թիվ 32 շենքի հետնամասից դեպի թիվ 39 շենք տանող հատված /800քմ/, թիվ 22 շենքից դեպի թիվ 21 շենք տանող հատված /110քմ/, թիվ 27 շենքի հետնամաս /300քմ/, թիվ 36 շենքի հետնամաս /375քմ/, 28 շենքի հետնամասը /300քմ/ Հ. Շիրազի փողոց /2000քմ/: Ճանապարհային պատվածքի և ծածկի տիպը – մասնակի գրունտային, հին ասֆալատապատում /անհարթ / Նախագծման փուլը, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջները - Աշխատանքային նախագիծ, համաձայն

	ՀՀՇՆIV-11.05.02-99 Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջները - Չափագրական հետազոտություն, նախագծի համաձայնություն շահագրգիռ կազմակերպությունների հետ Անհրաժեշտ փորձաքննություն - Պարզ փորձաքննություն, ինժեներաերկրաբանական հետազոտություն
Նախատեսվող աշխատանքները	• Երթևեկելի մասի վերին շերտի հեռացում: • Հիմնատակի ուղղում • Ավազակոպճային շերտի տեղադրում h =10սմ: • Խճային հիմքի իրականացումի =15սմ: • Բիտումի տարածում խճային հիմքի վրա: • Երթևեկելի մասի ծածկի իրականացում H=5 սմ մանրահատիկ ասֆալտբետոնով: • Կողմնակների ամրացում ավազակոպճային խառնուրդով H=5 սմ: • Ջրահեռացման համակարգի կառուցում /հնարավորության դեպքում/ • Հին մայթերի փոխարինում կամ նորերի կառուցում /հնարավորության դեպքում/
Ճանապարհի/փողոցի անվանումը	**Մասիս քաղաքի փողոցներ**
Ճանապարհի/փողոցի կարգը	III կարգ
Երթևեկամասերի ծածկի տեսակը	գրունտային
Ընդհանուր դրույթներ	• Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով՝ 3 թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով): • Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	***Հիմնական պարտականություններ՝*** ✓ Ինժեներական հետազննման իրականացում: ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում: ✓ Ճանապարհի ծրագծի սահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգտնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագիծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում: ✓ Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող նշաններով և բարձրությունների հենանիշերով: Նախագծողները և փորձաքննություն իրականացնողները պետք է ունենան համապատասխան աշխատանքների իրականացման լիցենզիաներ: **Հետազննման վերաբերյալ պահանջներ՝** ✓ Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,

- ✓ Հետազննման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

- ✓ Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- ✓ Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
- ✓ հողային պաստառի վերականգնում / վերակառուցում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
- ✓ հենապատերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
- ✓ ճանապարհային պատվածքի վերականգնում / վերակառուցում (ըստ անհրաժեշտության),
- ✓ մայթերի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
- ✓ ջրահեռացման համակարգի վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
- ✓ արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության),
- ✓ անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:
- ✓ Հաշմանդամություն ունցող անձանց մատչելիություն՝ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշմամբ:

Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝

- ✓ Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝
- ✓ բացատրագիր (որն իր մեջ կներառի հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազննման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտեզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա - մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը),
- ✓ ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
- ✓ գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և

ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակից տարրերից),

- ✓ նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
- ✓ տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծող լապտերներով կահավորելու սխեման և այլն),
- ✓ ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստ գրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների և աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջի կոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
- ✓ համահավաք ամփոփագրեր,
- ✓ նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
- ✓ նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ՝

- ✓ նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,
- ✓ համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,
- ✓ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,
- ✓ կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:

Նորմատիվային պահանջներ

Նախագծային փաստաթղթերը մշակելիս անհրաժեշտ է ղեկավարվել, ինչպես նաև հղում կատարել՝

- -ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերին,
- -ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերին,
- -ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ»,
- -ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,
- -ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերին,
- -ՀՀ կառավարության 19.03.2015թ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմանը,
- -ՀՀ կառավարության 16.02.2006թ «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և

ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N392-Ն որոշմանը:

- Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ I-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-հստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:
- Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի և ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերին համաձայն:
- Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ IV-11.05.02-99, ՇՆուԿ 2.05.03-84 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմերերով, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:
- ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն:
- Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի թիվ 113-Ն և 26.10.2006 թիվ 1699-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն:
- Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:
- Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101-97, ГОСТ 21.501-93 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

Նախագծային փաստաթղթերը մշակելիս անհրաժեշտ է զերծ մնալ ՀՀ տարածքում չգործող կամ ուժը կորցրած նորմատիվ փաստաթղթերի կիրառումից և դա հաշվի առնել նախագծային փաստաթղթերը հաստատելիս:

Կատարողը պետք է ունենա սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված 1-ին, 2-րդ կամ 3-րդ դասի լիցենզիա՝ ըստ հետևյալ ներդիրի.

Տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն) (01.09), 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մասիսի համայնքապետարան	**«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ**
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	**ՀՀ, ք. Երևան, Աէրացիա 2/3շ. 32բն.**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900 432 330 034	**ՀՀ 220163333424000**
ՀՎՀՀ 04240324	**ՀՎՀՀ02288148**
	Տնօրեն՝ Ռ.Վարդանյան
_____ (ստորագրություն) Կ.Տ.	_____ (ստորագրություն) Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 1360, *05 մարտ 2026թ.*

«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարդանյան

Ի պատասխան Ձեր 04.03.2026 թվականի թիվ 14/03-2 գրության տեղեկացնում եմ, որ Մասիս քաղաքի 7-րդ թաղամասի ասֆալտապատման և Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել նույն թաղամասում առկա մեծ փոսի մեջ /ճահճուտ/, որի հեռավորությունը շին հրապարակից հեռու է 3 կմ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

*Կատ. Կոմունալ
տնտեսության և
տրանսպորտի բաժնի պետ՝
Ս. Ամիրջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000292, 2-րդ դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-21, «ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ԱԷՐԱՑԻԱ, 2/3, ԲՆ.32

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG98-1757-7FE2-E55E**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000292-09

(ներդիրի սերիան, համարը)

«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ՝ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ԹՈՒՆԵԼՆԵՐ, ՈՒՂԵԱՆՑՆԵՐ, ԷՍՏԱԿԱԴԱՆԵՐ, ՀԵՆԱՊԱՏԵՐ ԵՎ ԱՅԼՆ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

21.08.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝ 21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGB9-B197-841D-B4E5**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Պատասխնատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	հավաստագրի սերիա	հավաստագրի համար	ստանալու օր, ամիս, տարեթիվ
ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ	Հ	001002	2024-08-06

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UGB9-B197-841D-B4E5
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

«ԳԵՈԶՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տարածք՝ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՄԱՍԻՍ, ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ՝ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 15 (350ՔՄ), ԹԻՎ 17 (350ՔՄ), ԹԻՎ 8 (350ՔՄ), ԹԻՎ 20 (300ՔՄ), ԹԻՎ 12 (550ՔՄ), ԹԻՎ 9 (200ՔՄ) ՇԵՆՔԵՐ, ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 32 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍԻՑ ԴԵՊԻ ԹԻՎ 39 ՇԵՆՔ ՏԱՆՈՂ ՀԱՏՎԱԾ (800ՔՄ), ԹԻՎ 22 ՇԵՆՔԻՑ ԴԵՊԻ ԹԻՎ 21 ՇԵՆՔ ՏԱՆՈՂ ՀԱՏՎԱԾ (110ՔՄ), ԹԻՎ 27 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍ (300ՔՄ), ԹԻՎ 36 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍ (375ՔՄ), 28 ՇԵՆՔԻ ՀԵՏՆԱՄԱՍԸ (300ՔՄ), Հ. ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ (2000ՔՄ) ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՎՈՂ՝ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎՈՂ ՈՒՂԵԳԾԵՐ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լիցենզիա ՔՊԼ-000308 Պատվիրատու՝ «ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

Ներդիր ՔՊՆ-000308-11

Տնօրեն՝ Դ. Ասատրյան

Ճարտարագետ-երկրաբան Դ. Ասատրյան

Երևան – 2026

ՀՀ ք. Երևան, Բաշինջաղյան 169շ/44բն. ☏ (094) 400661 E-mail info@geozone.am
/geozonedavit79@gmail.com/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լիցենզիա, ներդիր (նմուշի օրինակ)----------3

Բացատրական մաս----------6

Ներածություն----------6

1. Ընդհանուր տեղեկություններ----------8

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը----------10

3. Եզրակացություն----------11

4. Օգտագործված գրականության ցանկ----------12

5. ՈՒղեգծերի լուսանկարներ----------13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000308, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀՀ Լիբերայի ճանապարհ, համայնք Մասիս, Մասիս քաղաքի Բակայրի փողոցների երթևեկության ուղղություն

ՏՐՎԱԾ Է

2024-08-23, «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ Փ., 169, 44 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.

ՀՍԿՀ ՀԱՄԱՐ՝ UG56-3579-8DC9-3CE6

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական հասանելիության կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով առաջ արձագանքման ծածկագիրը (QR Code)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000308-11

«ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ ՀՀ Լոռու մարզի Ճոպաղ, Խանձաձոր Ստեփան, Ստեփան գյուղերի Բանկյուրի գրաբլուֆների հորոգում՝ ասֆալտբետոնապատման աշխատանքներ

23.08.2024թ.

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀԱՍԿՈՂ ՀԱՄԱՐ UGFA-424E-155A-2C7E
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական հասանելիության կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code)

Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ	Հավաստագրի սերիա	Հավաստագրի համար	Ստանալու օր, ամիս, տարեթիվ
ԴԱՎԻԹ ԱՍԱՏՐՅԱՆ	Հ	000714	2024-07-09

ՀՀ Լիբերալների ճարտ, հանձնակազմ Մասիս, Մասիս քաղաքի Բաղրամյան փողոցի Հորդանանի 1՝ ասֆալտապատման ուղեցծեր

ՀԱՍԱՐ ՀԱՄԱՐ՝ UGFA 424E 155A 2C7E
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական հարթակի կայքում մուտքագրելով հայտի համարը կամ սքանավորելով ստուգ տեղեկանքման հասցեագիրը (QR Code):

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Ներածություն

1.«ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից Ճարտարագետ-երկրաբանի կոորդինացմամբ և ղեկավարմամբ, համապատասխան ՀՀՇՆ-1-2,01-99-ի, ՀՀ Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգվող՝ ասֆալտապատվող ուղեգծերի ինժեներաերկրաբանական կառուցվածքի, գրունտների կարգերի պարզաբանման նպատակով իրականացվել են ճարտարագիտաերկրաբանական ուսումնասիրություններ:

2. Աշխատանքները իրականացվել են **«ԳԵՈԶՈՆ»** ՍՊԸ-ի կողմից **«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ**-ի պատվերով: Աշխատանքների իրականացման նպատակն է, համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի, ՀՀ Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգվող՝ ասֆալտապատվող ուղեգծերի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան եզրակացության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ.

1. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:
2. Տեղադիտական հետազննություններով վերհանել վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները, եթե դրանք առկա են (սողանք, քարաթափում, ճահճացում և այլ):
3. Գոյություն ունեցող փոսորակների խրամուղիների և տեղանքում արխիվային նյութերի միջոցով պարզաբանել գրունտների շերտերը և դրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը:
4. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը՝ կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:
5. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ամփոփում:

6. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Տեղանքը՝ ըստ ՀՀՇՆ-1-2,01-99-ի ինժեներաերկրաբանական պայմանների, I-ին կարգի տեղամաս է:

Ուսումնասիրվող տարածքի տեղազննումը կատարվել է 2026 թվականի մարտ ամսին: Ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոսորակները, խրամուղիները, հարակից տարածքների բնական կտրվածքները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տեղանքի մանրամասն ուսումնասիրության և գոյություն ունեցող բնական բացվածքների, տեղանքում առկա կտրվածքների հիման վրա տվյալ տարածքում գրունտները պարզ են դարձել:

Ուսումնասիրվող տեղանքի կոսմոֆոտո



1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրական տեսակետից տարածքը տեղադրված է ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնքի, Մասիս քաղաքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 830.0-841.0 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդականի հասակի լճային-ալյուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են՝ ավազակավերով, ավազներով, լճային կավերով և գլաքարա-ճալաքարա-կոպճային առաջացումներով (tAlQ):





Четвертичные озерно-аллювиальные песчано-глинистые и валунно-галечниковые отложения

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատի մարզի, հ. Մասիսի, Մասիս քաղաքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: ՈՒսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 25˚C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 60% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -3,7˚C է, թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Արտաշատի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, ˚C

Բնակա-վայրի անվա-նումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների ˚C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արտաշատ	829	-3.5	-0.5	6.0	12.8	17.5	21.8	25.5	24.9	20.0	13.1	6.0	-0.4	11.9	-28.9	42.6

Օդի խոնավությունը (%)

Բնակա-վայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Արտաշատ	78	73	63	59	59	54	52	52	57	67	75	79	64	64	32

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակա-վայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը													Ձյան ծածկույթը		
	ըստ ամիսների												տարե-կան	տասնօրյա առավելա-գույնը, սմ	օրերի թիվը	ջրի առա-վելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Արտաշատ	18/18	18/20	26/32	36/36	39/43	23/34	11/27	6/25	10/28	22/36	23/38	17/22	249/43	40	36	46

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,41 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 21մ/վ է, 50 տարվա ընթացքում 24մ/վ:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 35կգ/մ² է:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերը գտնվում են 2,5 մետր խորության հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ առկա բնական կտրվածքների, փոսորակների, հարակից տարածքների հետազննման և արխիվային նյութերի տվյալների (նախկինում և ներկայիս դաշտում փորձարկումներով, լաբորատոր ուսումնասիրման հիման վրա), ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ 2 ինժեներաերկրաբանական (ԻԵՏ) տարրերը կամ շերտերը վերևից–ներքև.

Նորոգվող՝ ասֆալտապատվող ուղեգծերի համար գրունտները տրվում են մինչև 3.0 մ խորությամբ: (տես ստորև):

ՀՀ Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս քաղաքի՝ 3-րդ թաղամաս թիվ 15 (350քմ), թիվ 17 (350քմ), թիվ 8 (350քմ), թիվ 20 (300քմ), թիվ 12 (550քմ), թիվ 9 (200քմ) շենքեր, Նոր թաղամաս թիվ 32 շենքի հետնամասից դեպի թիվ 39 շենք տանող հատված (800քմ), թիվ 22 շենքից դեպի թիվ 21 շենք տանող հատված (110քմ), թիվ 27 շենքի հետնամաս (300քմ), թիվ 36 շենքի հետնամաս (375քմ), 28 շենքի հետնամասը (300քմ), Հ. Շիրազի փողոց (2000քմ) բակային տարածքների նորոգվող՝ ասֆալտապատվող ուղեգծերի գրունտները տրվում են երկու շերտով:

Շերտ1 0.0-0.2մ Խճավազ, խիճ, կավավազային լցիչով:
Ծավալային կշիռը՝ 1.9տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 300կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 101-ի 12.IVբ կարգ է:

Շերտ2 0.2-3.0մ Կավ՝ կիսապինդ մածուցիկության, ավազի լցիչով:
Ծավալային կշիռը՝ 1,85 տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 180 կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության՝
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 33.4) III կարգ է:

3.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնքի, Մասիս քաղաքում:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում ծովի մակարդակից տատանվում են՝ 830.0-841.0 մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 2 շերտով:
- Ուսումնասիրվող տեղամասում ուղեգծերով, շերտ 2-ի գրունտները որպես հիմնատակ հուսալի են:
- Համաձայն ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,41 մետր:
- Գրունտային ջրերը գտնվում են 2.5 մետր խորության հորիզոններում:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը քարաթափությունը, ճահճացումը՝ բացակայում են:
- Ուսումնասիրվող տեղամասում փոսորակները կամ խրամուղիները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ հարկ լինելու դեպքում ինժեներ-երկրաբանի կողմից կատարել գրունտների զննում:

Ճարտարագետ-երկրաբան՝ Դ. Ասատրյան

«ԳԵՈԶՈՆ» «ГЕОЗОН» «GEOZONE» 01302936

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ГОСТ 25100-2020. Грунты. Классификация.
2. ՀՀՇՆ IV 10.01.01-2006 “ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ”
3. ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ-101 «**Բնահողերի և ապարների դասակարգում»**
4. ՀՀՇՆ 20-04.2020թ.-Երկրաշարժադիմացկուն շինարարություն
5. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար։ «Հիմնական դրույթներ»
6. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»
7. Геология АрмССР том 1 Геоморфология 1961г.

5. Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգվող՝ ասֆալտապատվող ուղեգծերի լուսանկարներ՝

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

*Սույն նախագծով նախատեսված է **Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքները**:*

Աշխատանքային նախագիծը կազմված է համաձայն Մասիս համայնքի կողմից տրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և ԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/35 ծածկագրով պայմանագրի, կնքված Մասիս համայնքի և «Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ-ի միջև:

Ներկայացված տեղամասերում 2026 թվականի Մարտ ամսին կատարվել են Տեղագրագեոդեզիական հետազննման աշխատանքներ համաձայն ГОСТ 32869-2014-ի, Ինժեներաերկրաբանական հետազննման աշխատանքներ համաձայն ГОСТ 32868-2014-ի, և առկա վիճակի լուսանկարահանում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորոգման՝ ասֆալտապատման ենթակա հատվածները գտնվում են Արարատի մարզում, Մասիս համայնքի Մասիս քաղաքում, ասֆալտապատվող հատվածների փաստացի երկարությունները՝

- ***3-րդ թաղամաս թիվ 15 ,17, 8, 20 շենքերի բակ** – 0,315 կմ*
- ***3-րդ թաղամաս թիվ 12 շենք տանող ճանապարհ հատված-1** – 0,132 կմ*
- ***3-րդ թաղամաս թիվ 12 շենք տանող ճանապարհ հատված-2** – 0,067 կմ*
- ***3-րդ թաղամաս թիվ 9 շենք** – 0,061 կմ*
- ***Նոր թաղամաս թիվ 32 շենքի հետնամասից դեպի թիվ 39 շենք տանող հատված** – 0,060 կմ*
- ***Նոր թաղամաս թիվ 22 շենքից դեպի թիվ 21 շենք տանող հատված**– 0,022 կմ*
- ***Նոր թաղամաս թիվ 36 շենքի հետնամաս** – 0,075 կմ*
- ***Նոր թաղամաս թիվ 27 շենքի հետնամաս** – 0,079 կմ*
- ***Նոր թաղամաս թիվ 28 շենքի հետնամաս** – 0,074 կմ*
- ***Հ. Շիրազի փողոց**– 0,465 կմ*

Վերոնշյալ ճանապարհահատվածների ճանապարհային պատվածքը հիմնականում գրունտային է, մասամբ առկա են ասֆալտբետոնյա հատվածներ, որոնք հիմնականում քանդված և քայքայված վիճակում են:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ

Համաձայն գոյություն ունեցող ճանապարհի պարամետրերի, նախագծվող ճանապարհները IV տեխնիկական կարգի են:

Հիմանանորոգման նախագիծն իրականացվել է ՀՀՇՆ 32-01-2022 և ՀՀՇՆ 30-01-2023 նորմերի ու պահանջների համաձայն, AutoCad 2021 թ. և Civil3D 2021թ. համակարգչային ծրագրերով:

Նախագծում ընդունված են հետևյալ տեխնիկական նորմերը

- *Հաշվարկային արագությունը - 60 կմ/ժամ*
- *Հողային պաստառի լայնությունը - 8 մ -10 մ*
- *Երթևեկելի մասի լայնությունը - 2x3.0մ , 2x3.5մ*
- *Մայթերի լայնությունը - 1.5 մ - 2.7 մ*
- *Կողնակների լայնությունը - 2x1.0մ*

Հիմնանորոգվող ծածկի անհարթության միջազգային /ԱՄՅ/ չափանիշի կիրառման պահանջները պետք է համապատասխանեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. հուլիսի 12-ի N 26-Լ հրամանի պահանջներին:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Հատակագծում էական փոփոխություն չի նախատեսվում, ճանապարհների ուղեգիծը մնում է անփոփոխ, հիմնականում նախատեսվում է պրոֆիլավորում: Հիմնանորոգվող ճանապարհների կառուցումը նախատեսված է միակողմանի թեքությամբ, հիմքի շերտերով և միաշերտ ա/բետոնի տեղադրումով, նախատեսվում են իջատեղերի կառուցում և կողնակների կառուցում :

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախատեսվում է իրականացնել քանդման և հողային աշխատանքներ հետևյալ ծավալներով

- *հանույթ – 3229,83 մ³,*
- *լիցք – 56,27 մ³,*

Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔ

Նախատեսվում է իրականացնել նոր պատվածքի կառուցում հետևյալ շերտերով և ծավալներով՝

- *Երթևեկելի մաս*

- *Ավազակոպճային հիմքի տեղադրում h=12 սմ ԳՕՍՏ 25607-94–- 9 339,0 մ² մակերեսով,*
- *Խճային հիմք բիտումի տարածումով (4,12տ / 1000մ²), h-15սմ –- 9 339,0 մ² մակերեսով*
- *Մանրահատիկ խիտ ա/բետոն „Բ”տիպի h=5սմ ԳՕՍՏ 9128-2013 –9 339,0 մ² մակերեսով,*

- *Իջատեղեր / երկարությունը նախատեսվում է 10գծ.մ/*

- *Ավազակոպճային հիմքի տեղադրում h=12 սմ ԳՕՍՏ 25607-94–- 388,0 մ² մակերեսով,*
- *Խճային հիմք բիտումի տարածումով (4,12տ / 1000մ²), h-15սմ –- 388,0 մ² մակերեսով*
- *Մանրահատիկ խիտ ա/բետոն „Բ”տիպի h=5սմ ԳՕՍՏ 9128-2013 –388,0 մ² մակերեսով,*

Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում

ՄԱՅԹԵՐ

Բակային տարածքներում, ինչպես նաև Հ. Շիրազի փողոցում նախատեսվում է իրականացնել մայթեր 1,5-2,7 մ լայնությամբ:

- *Բազալտե եզրաքար 15x30սմ ԳՕՍՏ 13015-2012 –- 523,0 գծմ,*
- *Բազալտե եզրաքար 15x20սմ ԳՕՍՏ 13015-2012 –- 208,5 գծմ,*
- *Խճային հիմքի իրականացում 12սմ հաստությամբ –- 935,0 մ² մակերեսով,*
- *Մանրահատիկ ավազային «Դ» տիպի ա/բետոնե շերտի տեղադրում h=3սմ հաստ. – 905,0 մ² մակերեսով,*
- *Մանրահատիկ խիտ ա/բետոն „Բ”տիպի h=4սմ ԳՕՍՏ 9128-2013 –30,0 մ² մակերեսով,*

Բազալտե Եզրաքարերի տեղադրումից հետո անհրաժեշտ է իրականացնել եզրահանում: Իջատեղերի և մուտքերի, ինչպես նաև հետիոտնային անցումների հատվածներում եզրաքարերը

անհրաժեշտ է տեղադրել թեք դիրքով՝ բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների անվտանգ տեղաշարժման համար:

Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Նախագծով նախատեսված է նոր մետաղական խողովակների և ե/բետոնե 30x34 սմ վաքերի տեղադրում համաձայն գծագրերի

- *Մետաղական խողովակների տեղադրում d=273 մմ ԳՕՍՏ 10704-91 – 12,0 գծմ,*
- *Հավաքովի ե/բետոնե ջրընդունիչ 35x60 սմ չափերի վաք մետաղական ցանցով ԳՕՍՏ 32955-2014 – 90 գծմ,*

Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են գծագրերում

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Նախագիծը կազմված է ՀՀ կառավարության 2006թվականի հոկտեմբերի 26-ի N1699-Ն և ՀՀ կառավարության 2008թվականի հունվարի 10-ի N113-Ն որոշումների պահանջներին համապատասխան, որից ելնելով մշակված են կոմպլեքս միջոցառումներ երթևեկության անվտանգությունը ապահովելու համար:

Երթևեկության անվտանգության և վարորդի կողմնորոշման համար նախագծով նախատեսված է իրականացնել ճանապարհի երթևեկելի մասի գծանշում լուսանդրադարձիչ գնդիկներով համաձայն ԳՕՍՏ 32953-2014-ի և ԳՕՍՏ Ռ 51256-2018 պահանջների և ճանապարհային նոր նշանների տեղադրում համաձայն ԳՕՍՏ Ռ 52290-2004-ի պահանջների:

- *Ճանապարհային նոր նշանների տեղադրում–– 36 հատ,*
- *Երթևեկելի մասի գծանշում հոծ գծով–– 0,385 կմ,*
- *Երթևեկելի մասի գծանշում ընդհատված գծով –– 0,768 կմ,*
- *Գծանշան - 60,8 մ^2*

Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում

Աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է օգտվել գծագրերից և ամփոփագրերից:

Նախագծով նախատեսվում է ճանապարհային գծանշման իրականացում թերմոպլաստ նյութով: Օգտագործվող նյութը պետք է համապատասխանի գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, ապահովի բարձր կպչունություն ճանապարհածածկին, մաշվածակայունություն և հստակ տեսանելիություն ցերեկային և գիշերային պայմաններում:

ԿՈՂՆԱԿՆԵՐ

Հիմնանորոգվող ճանապարհի հատվածում նախատեսվում է իրականացնել կողնակներ:

Նախատեսվում է կողնակների մաքրում բուսական շերտից, բնահողի հեռացում, անհրաժեշտության դեպքում ցամաքուրդային գրունտի տեղադրում և կողնակների ամրացում ավազակոպիճով h=5 սմ հաստությամբ :

- *Կողնակների ամրացում ավազակոպիճով h=5 սմ ԳՕՍՏ 23735-2014 – 1466,5 մ^2 մակերեսով,*

Մանրամասն աշխատանքային ծավալները ներկայացված են ամփոփագրերում:

Հաշվի առնելով վերոնշյալ Ճանապարհահատվածում բնակելի շինությունների առկայությունը, շինարարական աշխատանքներ իրականացնելիս կարող են ի հայտ գալ որոշ խոչընդոտներ, որոնք անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինեն իրականացնել տեղային լուծումներով և որոշակի փոփոխություններ կատարելով՝ Պատվիրատուի կողմից համաձայնություն ստանալու դեպքում:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ կապալառուն պետք է օբյեկտի սկզբում և վերջում տեղադրի համապատասխան տեղեկատվական նշաններ, որտեղ պետք է նշված լինի օբյեկտի անվանումը, օբյեկտի շինարարական աշխատանքների ժամկետը, պատվիրատուն և կապալառուն, կոնտակտային հեռախոսահամարը: Անհրաժեշտ է համայնքի ներկայացուցիչների հետ ճշտել ստորգետնյա ցանցերի տեղադիրքը և նշանակությունը:

Շինհրապարակը պետք է կահավորված լինի հակահրդեհային միջոցներով և բժշկական առաջին օգնության պարագաներով: Գիշերային պայմաններում շինարարական աշխատանքների իրականացման դեպքում կապալառուն պետք է ապահովի շինհրապարակի և աշխատանքների կատարման վայրի համապատասխան լուսավորությունը:

Աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ ապահովվի մարդկանց անվտանգությունն ու հարմարությունը և պաշտպանի տեղամասին մոտ եղած բնակիչներին և նրանց ունեցվածքը: Պետք է ապահովել հանրային երթևեկությունը նորոգվող տեղամասի հարակից ու տեղամասի սահմաններում գտնվող ճանապարհների վրա՝ մինչև աշխատանքն ընդունվի: Կապալառուն պետք է համագործակցի տեղի ճանապարհային ոստիկանության հետ և ձեռք բերի երթևեկության կազմակերպման պլանի իրականացման համար պահանջվող բոլոր թույլտվությունները: Շինարարական աշխատանքների ընթացքում պետք է ապահովել մուտքեր՝ իջատեղերի, ճանապարհների, փողոցների, ձեռնարկությունների տարածքների, կայանատեղերի, բնակելի վայրերի, ավտոտնակների և այլ օբյեկտների համար, երթևեկելի մասից հեռացնել հողի կուտակումներն ու այլ նյութերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում, երբ ճանապարհը բաց է հանրային երթևեկության համար, շինարարական գործողությունները անհրաժեշտ է սահմանափակել.

- պետք է ապահովել առնվազն 3,5մ լայնությամբ երթևեկության գոտիներ

- կայանատեղերը պետք է տեղադրել երթևեկելի գոտուց առնվազն 4մ հեռու կամ երթևեկության հաստատված արգելապատնեշներից այն կողմ,

- սարքավորումները պետք է բանեցնել երևեկության ուղղությամբ, եթե դա գործնականում կիրառելի է,

- կից երթևեկության գոտիների շինարարությունը պետք է ավարտել նույն օրը, նույն մակարդակի վրա, բացի այն դեպքերից, երբ անկումները գերազանցում են 75մմ-ը և բարձրություններն ունեն 1:3 հարաբերություն: Այն դեպքերում, երբ կից գոտիների անկումները գերազանցում են 75մմ-ը և բարձրություններն ունեն 1:3 հարաբերություն՝ աշխատանքը կարող է թողնվել հաջորդ օրվան: Տվյալ դեպքում գիշերվա համար պետք է տեղադրել <<Անհարթ ծածկ>> զգուշացնող նշաններ, լուսաազդանշանային առկայծող լապտերներ և լուսանդրադարձնող ժապավեններով ամրացված արգելափակոցներ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Շրջակա միջավայրի պաշտպանություն և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար պետք է հաշվի առնել ՀՀՇՆ 30-01-2023 դրույթները: Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ գրունտից և շին.աղբից՝ բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

Շինարարական աշխատանքների կազմակերպումն իրականացնել ՀՀՇՆ I-3.01.01-08 <<Շինարարական արտադրության կազմակերպում շինարարական նորմերով և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 07-Ն հրամանով կատարման կարգով>> սահմանված

շինարարական հրապարակի կազմակերպմանը, աշխատանքների իրականացման, տեխնոլոգիաների և անվտանգության պայմանների ապահովմանը ներկայացնող պահանջների համապատասխան, մասնավորապես.

- շինարարության կազմակերպման նախագծով նախատեսված շինարարական հրապարակի գլխավոր հատակագծին համապատասխան տեղում ապահովել շինարարակն հրապարակի (ուղեգծի) հատկացումը, ցանկապատումը (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային), լուսավորումը, երկրաբաշխական նշահարման հիմքերի ստեղծումը, մոտեցման ճանապարհենրի կառուցումը, պահեստային տնտեսության ստեղծումը և շինարարության կարիքների համար անհրաժեշտ կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության ժամանակավոր շինությունների նախապատրաստումը,

- շինմոնտաժային աշխատանքների կատարման ժամանակ պահպանել օդի փոշոտվածության և գազոտվածության կանխարգելման պահանջները,

- բանվորների ապահովել անհատական պաշտպանական միջոցներով (հատուկ արտհագուստ, կոշիկ)

- շինարարական հրապարակում գոյացած արտադրական ու կենցաղային աղբը մաքրել, վնասազերծել և փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով հատուկ սահմանված երթուղիներով տեղափոխել դրանց հեռացման համար նախապես հատկացված վայրեր,

- շինարարական նյութերի և կոնստրուկցիաների փոխադրումը դեպի շինարարական հրապարակ և շինարարական հրապարակից դուրս իրականացնել հատուկ սահմանված երթուղիներով՝ փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

- շինարարության ընթացքում խախտված հողերը ռեկուլտիվացնել, կանխել բնական ռեսուրսների կորուստները, վնասակար արտանետումները հողեր, ջրավազաններ ու մթնոլորտ,

- աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական, սանիտարահիգիենիկ միջոցառումներ և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անցկացնել պարտադիր հրահանգավորում:

- շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

1. ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում»

2. ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպում» :

Կազմեց՝ ***/Տ.Ամիրխանյան/***

Ստուգեց՝ ***/ Ռ.Վարդանյան/***

Պահանջվող տեխնիկական միջոցներ

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

Հ/Հ	Անվանումը	Տեսակը	Քանակը
1	2	3	4
1	Ասֆալտբետոնի արտադրության գործարան	առնվազն 50տ/ուժ արտադրողականությամբ	1
2	Ավտոինքնաթափ	ցանկացած	6
3	Ամբարձիչ	ցանկացած	2
4	Էքսկավատոր	ցանկացած	2
5	Թրթռային տոփանիչ	ցանկացած	1
6	Ավտոգրեյդեր	ցանկացած	1
7	Ասֆալտփռիչ	ոչ պակաս 3մ լայնությամբ (կարգավորվող)	1
8	Աֆտոգուդրոնատոր	ցանկացած	1
9	Ջրի մեքենա	ցանկացած	1
10	Գլդոն 3 - 5 տ	թրթռագլդոն	1
11	Գլդոն 6 - 8 տ	թրթռագլդոն	1
12	Գլդոն 11 - 18 տ	հարթ թմբուկավոր գրունտի խտացման համար	1
13	Գլդոն 9 - 12 տ	պնևմաանվավոր	1

Կազմեց՝ **/Տ.Ամիրխանյան/**

Ստուգեց՝ **/Ռ.Վարդանյան/**

Պահանջվող լաբորատոր ստուգումներ

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

Հ/h	*Նյութերի լաբորատոր ստուգափորձ*	*Չափման միավորը*	*Պահանջվող քանակը*
1	*2*	*3*	*4*
1	Ա/բ խառնուրդի կազմի ընտրություն (բաղադրատոմս) մանրահատիկ, "Բ" տիպի	հատ	1,0
3	Ա/բ խառնուրդի կազմի ընտրություն (բաղադրատոմս) (մայթ) "Դ" տիպի	հատ	1,0
4	**Ավազ ա/բ խառնուրդի համար**		
*	Մանրահատիկ ա/բ-ի համար 1000մ^3-ից 1 նմուշ	նմուշ	1,0
*	"Դ" տիպի (մայթ) ա/բ-ի համար 1000մ^3-ից 1 նմուշ	նմուշ	1,0
5	**Խիճ ա/բ խառնուրդի համար**		
*	Մանրահատիկ ա/բ-ի համար 1000մ^3-ից 1 նմուշ	նմուշ	1,0
*	"Դ" տիպի (մայթ) ա/բ-ի համար 1000մ^3-ից 1 նմուշ	նմուշ	1,0
6	Խիճ հիմքի համար 1500մ^3-ից 1 նմուշ	նմուշ	2,0
7	Ասֆալտբետոնե խառնուրդ ԱԲԳ-ից մանրահատիկ "Բ" տիպի, ամեն 500 տն.-ից 1 նմուշ	նմուշ	3,0
8	Ասֆալտբետոնե խառնուրդ ԱԲԳ-ից (մայթ) "Դ" տիպի, ամեն 500 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
9	Ասֆալտբետոնե խառնուրդ տեղադրվաց փռված չխտացված մանրահատիկ "Բ" տիպի, ամեն 500 տն.-ից 1 նմուշ	նմուշ	3,0
10	Ասֆալտբետոնե խառնուրդ տեղադրվաց փռված չխտացված (մայթ) "Դ" տիպի,, ամեն 500 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
11	**Հանքային փոշի**		
*	Մանրահատիկ ա/բ-ի համար 200 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
*	"Դ" տիպի (մայթ) ա/բ-ի համար 200 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
12	**Կապակցող նյութ բիտում**		
*	Մանրահատիկ ա/բ-ի համար 50 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
*	"Դ" տիպի (մայթ)ա/բ-ի համար 50 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
*	Հիմքի համար 50 տն.-ից 1 նմուշ	նմուշ	1,0
15	Ենթահիմքի ավազակոպիճային լցանյութ, հանքից 1 նմուշ, այնուհետև ամեն 2000մ^3-ի դեպքում 1 նմուշ	նմուշ	2,0
16	Ավազակոպիճ կողնակների համար 1 նմուշ, հանքավայրը փոխելու դեպքում յուրաքանչյուր հանքից 1 նմուշ	նմուշ	1,0
17	Ա/բ խառնուրդ տեղադրված խտացված կեռային նմուշ (ամեն 7000մ^2 համար 1 լրակազմ 3 նմուշ)	լրակազմ	2,0
20	Ցեմենտբետոն 50մ^3 -ից 3 նմուշ / B-15 դասի /	նմուշ	1,0
21	Ցեմենտբետոն 50մ^3 -ից 3 նմուշ / B-20 դասի /	նմուշ	1,0
22	Հարթության որոշում, համաձայն 12.07.2022թ. N26-L ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի	կմ	0,465

Կազմեց՝ **/Տ.Ամիրխանյան/**

Ստուգեց՝ **/Ռ.Վարդանյան/**

Օրացուցային գրաֆիկ

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

Հ/Հ	Կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
1	Լաբորատոր փորձարկման աշխատանքներ												
2	Ճանապարհային պատվածքի քանդման աշխատանքներ												
3	Իջատեղերի քանդման աշխատանքներ												
4	Մայթերի կառուցման աշխատանքներ												
5	Ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ												
4	Ճանապարհային պատվածքի կառուցման աշխատանքներ												
5	Իջատեղերի կառուցման աշխատանքներ												
6	Կողնակների տեղադրման աշխատանքներ												
7	Ճանապարհի կահավորման աշխատանքներ												

Ծանոթություն՝
Հիմնանորոգման աշխատանքների կատարման ժամկետը նախատեսվում՝ 120 օր :

Կազմեց՝ /Տ.Ամիրխանյան/

Ստուգեց՝ /Ռ.Վարդանյան/

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

Նախատեսված աշխատանքների կատարման համար պահաջվում են՝ <<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում >> լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի՝ ***Տրանսպորտային*** *:*

Աշխատանքային ռեսուրսներ

Նախատեսված աշխատանքների իրականացման համար աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են.

N	***Որակավորումը***	***Մասնագիտական փորձը***		
		գործունեության ոլորտը	***կատարած աշխատանքը***	***նվազագույն մասնագիտական փորձը***
1	ճարտարագետ -շինարար կամ ճարտարագետ-ճանապարհաշինարար	տրասպորտային շինարարություն	ճանապարհի հիմնանորոգման կամ կառուցման աշխատանքներ	3 տարի
2	գեոդեզիստ	տրասպորտային շինարարություն	ճանապարհի հիմնանորոգման կամ կառուցման աշխատանքներ	3 տարի

Կազմեց՝ **/Տ.Ամիրխանյան/**

Ստուգեց՝ **/Ռ.Վարդանյան/**

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի բակային տարածքների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի 7-րդ թաղամասի ճանապարհների նորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների

Լիցենզիա	Ներդիր	Լիցենզիայի դաս և հավաստագրի կարգ
Քաղաքաշինության բնագավարում շինարարության իրականացում՝	տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն)	1-ին կամ 2-րդ

Կազմեց՝ /Տ.Ամիրխանյան/

Ստուգեց՝ /Ռ.Վարդանյան/

Ուղիղ և կոր տեղամասերի աղյուսակ ԳOUS 21.701-2013 /
Ведомость углов поворота, прямых и кривых ГОСТ 21.701-2013

Трасса: **3-րդ թաղամաս թիվ 12 շենք-հատված 1**
Նկարագիր/Описание:
Սկիզբ/Начальный ПК: 0+00.00
Վերջ/Конечный ПК: 1+32.00

Անկյուն/ Точка	Անկյան գագաթի դիրքը/ Положение вершины угла			Շրջադարձի դիրքը/ Величина угла поворота		Շառավիղ, մ/ Радиус, м	Կորի տարերը/ Элементы кривой, м				Անկյան գագաթի հեռավորություն, մ Расстояние между вершинами, м	Ուղիղ մասերի երկարություն Длина прямой, м
